Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Հիշեցում չորրորդ. նպատակ և միջոց: Խորհրդային ժամանակներում կրթություն և դաստիարակություն ստացած մարդիկ հավանաբար չեն մոռացել կոմունիստական գաղափարաբանության այն առանցքային դրույթներից մեկը, ըստ որի իշխող դասակարգերը, իշխողները, պաշտոնյաները, հոգևորականները և այլ կառավարողները միշտ աշխատել են ժողովրդին պահել խավարի ու տգիտության մեջ: Մեր օրերում խավար ու տգիտություն ասելով պետք է հասկանալ ոչ թե գիտելիքների պակասը, այլ աշխարհում ու առանձին երկրներում ընթացող զարգացումներին անտեղյակ լինելը, կուլիսների ետևում ընթացող բանակցությունների, գաղտնի համաձայնությունների նյութից գաղափար չունենալը:

Սա՞ այդ «ժամանակակից» տգիտությունը չէ՞ պատճառը, որ այսօր միմյանց հետ են շփոթվում կամ ուղղակի նույնացվում են նպատակն ու միջոցը, պատճառն ու հետևանքը: Օրինակ, նպատակ է հռչակվում անկախությունը, մինչդեռ այն միջոց է որոշակի նպատակների հասնելու համար: Նպատակ է հռչակվում փողը, իշխանությունը, խաղաղությունը... և մարդը ինքն իրեն չի հարցնում. իսկ դա՞ ինչի համար է... Եթե անկախությամբ մենք այսօր չենք լուծում ոչ մի հիմնահարց, ուրեմն կամ դա անկախություն չէ, կամ այդպիսի անկախություն պետք չէ: Եթե խաղաղությունը ոչնչացնում է մարդու տեսակներից մեկը, օրինակ հայ տեսակը, ո՞ւմ է ձեռնտու այդ խաղաղությունը, հայի՞ն: Ինչ է, հայը տառապում է ինքնաոչնչացման մոլուցքո՞վ: Օրինակներ, անշուշտ, շատ կարելի է բերել: Խնդիրն այն է, որ պետական այրերը, առաջնորդի դեր ստանձնած անձերն ու խմբերը ասես իրենք իրենց համար ճշտեն նպատակների գերակայություններն ու դրանց հասնելու միջոցները և ապա հասարակությանը, ժողովրդին կողմնորոշեն, մեր կարծիքով, ոչ այնքան բարդ այս խնդրում:

Վաչիկ Դանիելյան
«Հայրենյաց պաշտպան» ԵՀԿ

Ղարաբաղյան հակամարտության նախապատմությունը

Ամեն մի երկիր, ամեն ազգ իր ավանդական պատվարն ունի: Երբ ժողովրդի պատմությունը հաջող ընթացք է ունենում, այն դառնում է մշակութային եւ քաղաքական կյանքի կենտրոն: Իսկ երբ ճակատագիրը հալածում է ազգին, դառնում է ազգային կյանքի կենտրոն, հույզերի կոգի, վերածնության երաշխիք:

Հայ ժողովրդի համար հենց նշված վերջին դերն է խաղացել եւ խաղում Արցախը:

Արցախը, գտնվելով հայկական լեռնաշխարհի հյուսիս-արեւելյան մասում, հնուց ի վեր հանդիսացել է պատմական Հայաստանի նահանգներից մեկը, որի հյուսիս-արեւելյան սահմանը, ըստ բոլոր հնագույն աղբյուրների, Կուր գետն է: Արցախի հայկական լինելիությունը հաստատում է նաեւ ժամանակակից պատմագրությունը, մասնավորապես ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ, պատմաբան Սախարովը գրում էր, որ «Կուր գետի աջափնյա մշակութային միջավայրը եղել է հայկական, եւ այդ միջավայրի ստեղծագործություններն էլ գրված են հայերեն»:

Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ Հայաստանի առաջին բաժանումից հետո (387 թ.) Արեւելյան Անդրկովկասի տարածքը, այդ թվում եւ Արցախը, անցան Պարսկաստանին:

Ուշ միջնադարում, ձեւականորեն գտնվելով շահական Պարսկաստանի կազմում, Արցախի մելիքությունները իրենց փաստացի ինքնիշխանությունը կարողացան պահպանել նույնիսկ այն ժամանակ, երբ Արեւելյան Հայաստանն ամբողջությամբ կորցրել էր երբեմնի անկախության մնացորդները: Խոսելով արցախյան մելիքների մասին, Մովսես Բաղրամյանը վկայել է.«Թեեւ նրանց տիրել է ուիշը (պարսիկը), սակայն վերջինս առանց նրանց բան չի կարող անել, որովհետեւ ամեն ծառայություն մեր ազգի ձեռքին է. ինչ կամենա նրանց միջոցով է գլուխ բերում, նրանցով է պաշտպանվում, նրանցով է պատերազմում թշնամիների դեմ եւ նրանցով է հասնում հաղթանակի»:

Լեռնային Ղարաբաղի տարածքն անցյալում նույնպես դիտվել է իբրեւ առանցքային իրենց տիրապետությունն Անդրկովկասում հաստատելու համար պայքար մղող պետությունների կողմից: Եվ պատահական չէ, որ 1813 թ. Ռուսաստանի եւ Պարսկաստանի միջեւ տարածաշրջանը ազդեցության գոտիների բաժանման շրջանում, հենց ղարաբաղյան Գյուլիստան գյուղի մոտ է ստորագրվել հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրի համաձայն Ղարաբաղն անցավ Ռուսաստանին:

1918 թվականը ելակետային դարձավ արցախյան հակամարտության պատմությանմեջ, քանի որ միջազգային-քաղաքական գործընթացներում ղարաբաղյան հակամարտությունն առաջին անգամ արձանագրվել է հենց 1918 թ., երբ ռուսական կայսրության փլուզման ընթացքում Անդրկովկասի երեք ժողովուրդները, այն է հայերը վրացիները եւ թուրքերը (վերջիններս ռուսական աղբյուրներում կոչվում էին կովկասյան թաթարներ), հայտարարեցին անկախ ազգային պետություններ ստեղծելու մասին:

Թուրքական սվինների վրա ստեղծված Ադրբեջանը, տարածքային հավակնություններ ներկայացնելով Բաքվից մինչեւ Կութում, սկսեց իր դաժան ինտերվենցիան: Ի պատասխան դրան, արցախահայությունը զենքը ձեռքին պայքարի ելավ պաշտպանելու իր ինքնությունը: Այդ նպատակով դաշնակցական Կուսակցության նախաձեռնությամբ 1918 թ. հուլիսի 22-ից-26-ը Շուշիում անցկացվեց արցախահայության առաջին համագումարը: Համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց Ղարաբաղի Հայոց ազգային խորհուրդ եւ 7 հոգուց բաղկացած Ղարաբաղի ժողովրդական կառավարություն: Կառավարությունը գլխավորում էր Եղիշե Իշխանյանը: Չնայած թշնամու գերազանցող ուժերին Արցախյան խորհուրդը կարողացավ կազմակերպել երկրամասի պաշտպանությունը, թեեւ 1918-20 թթ. ոչնչացվել էին տասնյակ գյուղեր եւ Շուշի քաղաքը: Հարկ ենք համարում նշել, որ այն ժամանակ մեծ տերությունները եւ համաշխարհային հանրությունը ի դեմս Ազգերի լիգայի, վիճելի ճանաչեցին Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Այս հարցը վիճելի է ճանաչել նաեւ 1919-20 թթ. Ճարիի խաղաղության վեհաժողովի, արդեն խորհրդային Ռուսաստանի, ինչպես Ադրբեջանի կողմից: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վիճելիության մասին են խոսում բազմաթիվ արխիվային նյութեր, որոնցից մեկում նշված է. «Ելնելով նրանից, որ բրիտանական հրամանատարության կողմից Ղարաբաղը մինչեւ հարցի լուծումը խաղաղության կոնֆերանսի ոչ մի պետության, մասնավորապես Ադրբեջանի տարածք չի ճանաչվել, Ազգային Խորհուրդը գտնվում է, որ միակ հարմար կառավարման ձեւ հանդիսանում է Ղարաբաղի համար այնտեղ անգլիական գեներալ-նահանգապետի նշանակումն է, որի համար էլ դիմում է անգլիական հրամանատարությանը»:

1920 թվականին Հայաստանի խորհրդայնացումից հետո, լուրջորինակ ձեւով որոշվեց Լեռնային Ղարաբաղի հետագա ճակատագիրը: Մի հեռագրում ուղղված Օրջոնոկիձեին, Ստալինը գրում է. «Իմ կարծիքով չի կարելի անընդհատ խուսանավել երկու կողմերի միջեւ. այլ պետք է պաշտպանել կողմերից մեկին տվյալ դեպքում, իհարկե, Ադրբեջանին թուրքիայի հետ: Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում»:

Եվ այսպես «Պրոլետարական հեղափոխությունը» մահմեդական Արեւելքում տարածելու գաղափարով տոգորված 1921 թ. ՌԿ(բ)Կ

Կովկասյան բյուրոն հուլիսի 5-ին ադրբեջանամետ որոշում ընդունեց, միաժամանակ նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղին տալ լայն ինքնավարություն վարչական կենտրոն Շուշի քաղաքով: Դա պատճառաբանվեց այն սխալ հիմնավորմամբ, թե իբր «դա անհրաժեշտ է մահմեդականների եւ հայերի միջեւ ազգային խաղաղություն հաստատելու համար, եւ որ դա է թելադրում Ադրբեջանի հետ Ղարաբաղի տնտեսական կապերի շահը»: Այնուհետեւ 1923 թ. մայիսին Ադրբեջանի կազմում ձեւավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, իսկ 1928 թ. նրա կազմից հանվեց Շահումյանի շրջանը, որտեղ հայ բնակչությունը մեծամասնություն էր կազմում:

Այսպիսով, հայկական բնակչության ճնշող մեծամասնության կամքին հակառակ, Լեռնային Ղարաբաղը ոչ միայն հանձնվեց Ադրբեջանական ԽՍՀ-ին, այլեւ մասնատվեց առանձին միավորների: Փաստորեն, սրանով դարաբաղյան հիմնախնդիրը ոչ թե լուծվեց, այլ «սառեցվեց» գրեթե 70 տարով: Արցախահայության դեկավարության ու մտավորականության ներկայացուցիչները չնայած խորհրդային ամբողջատիրական վարչակարգի հետապնդումների առկայությունը, բազմիցս հանդես են եկել Մոսկվայի կենտրոնական իշխանությանն ուղղված դիմումներով, նամակներով եւ խնդրանքով, (1945, 1966, 1977 թթ.) պահանջելով վերացնել 1921 թ. հակասահմանադրական եւ անօրինական որոշումը, քննարկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմը վերադարձնելու հնարավորությունը: Ի պատասխան, Ադրբեջանի իշխանությունները հրահրում էին ազգամիջյան ընդհարումներ, ձերբակալում ու աքսորում հայտնի գործիչներին:

Ինչպես տեսնում ենք արցախահայությունը երբեք չհամակերպվեց հայրենի հողը թողնելու, մայր հայրենիքից առանձին ապրելու փաստի հետ: Եվ երբ ստեղծվեց ազգային ազատագրական պայքարը նոր մակարդակով շարունակելու հնարավորություն, չվարանեց նետվելու մարտի մեջ եւ վիժեցնելու թուրանականության նոր դավերը:

1988 թ. փետրվարի 20-ին Ստեփանակերտում կայացած մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց հետեւյալ որոշումը. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորության ցանկություններին խնդրել ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին խոր գիտակցություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ եւ լուծել ԼՂԻՄ-ը ադրբեջանական ԽՍՀ կազմից հայկական ԽՍՀ կազմին տալու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առաջ ԼՂԻՄ-ը

ադրբեջանական ԽՍՀ կազմից հայկական ԽՍՀ կազմին տալու հարցը դրականորեն լուծելու համար»:

Երեւանում ԼՂԻՄ-ի որոշումն ընդունեցին ցնցությամբ, եւ հազարավոր մարդիկ դուրս եկան ցույցի, իսկ Ադրբեջանն այդ ժեստին պատասխանեց կազմակերպելով հայերի ջարդեր եւ զանգվածային սպանություններ ադրբեջանական ԽՍՀ-ի Սումգայիթ, Բաքու, Շամխոր, Մինգեչավուր քաղաքներում, այլ շրջաններում, որի հետեւանքով հարյուրավոր մարդիկ զոհվեցին, հազարավորները վիրավորվեցին:

Եվ պարզ է, որ այս ամենը կատարվում էր Կրեմլի իմացությամբ ու մասնակցությամբ:

Հաշվի առնելով ստեղծված բարդ իրավիճակը 1989 թ. հունվարի 20-ից ԽՍՀՄ-ում առաջին անգամ ԼՂԻՄ մտցվեց կառավարման հատուկ ծեւ: Կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Հատուկ կառավարման կոմիտե ԽՄԿԿ Կենտկոմի բյուրոյի վարիչ Ա. Վոլսկու նախագահությամբ: Հատուկ կառավարման կոմիտեն իր գործունեությամբ անմիջապես ենթարկվում էր ԽԽՍՀՄ-ի պետական իշխանության օրգաններին: Սկզբից Ադրբեջանը ողջունեց հատուկ կոմիտեի ստեղծումը, սակայն հետագայում այնտեղ հասկացան, որ ԼՂԻՄ-ը դուրս է մնում Բաքվի վերահսկողությունից [17]: Այդ իսկ պատճառով վերջինս իր պայմանները թելադրելու նպատակով սկսեց շրջանցել կոմիտեին:

Մարզային կուսակցական եւ պետական մարմինների լիազորությունների դադարեցումը հասունացրեց մարզի բնակչության ներկայացուցիչների համագումար հրավիրելու գաղափարը: Օգոստոսի 16-ին տեղի ունեցած համագումարն ընտրեց Ազգային խորհուրդ, որի առջեւ խնդիր դրվեց գործնականում իրագործել ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը:

Ի պատասխան դրան 1989 թ. հուլիսի 21-ից սկսած, Ադրբեջանի կողմից հայկական ԽՍՀ-ն ենթարկվեց տնտեսական ու քաղաքական շրջափակման: Ադրբեջանից ԼՂԻՄ եւ Հայկական ԽՍՀ տանող երկաթգծերն ու ավտոխճուղային ճանապարհները փակվեցին: Միայն 1989 թվականի սեպտեմբերին Հայաստանում չստացվեցին 33 347 վագոն կամ ավելի քան 1,5 միլիոն տոննա տարբեր ժողովրդատնտեսական բեռներ:

Սաստկացան նաեւ ճնշումներն ու պատժամիջոցները Շահումյանի շրջանում: Դեպքերի նման զարգացումը կանխելու համար ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի հուլիսի 26-ի

արտահերթ նստաշրջանն որոշում ընդունեց շրջանը ԼՂԻՄ կազմի մեջ մտցնելու վերաբերյալ: Արցախահայությունն իր տրամադրության տակ չունենալով պաշտպանության համար բավարար միջոցներ եւ հնարավորություններ բազմիցս դիմել է ԽՍՀՄ ամենաբարձր ատյանների օգնությանը, սակայն ապարդյուն: Դեռ ավելին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1989 թ. նոյեմբերին ընդունեց որոշում «ԼՂԻՄ-ում իրավիճակի բարելավման միջոցների մասին», որով լուծարեց Հատուկ կառավարման կոմիտեն, փոխարենը ստեղծեց Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ի Կազմակերպչական կոմիտեն ադրբեջանական ԽՍՀ Կոմկուսի ԿԿ-ի նշանակված երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոյի եւ Կրեմլի ներկայացուցիչ է. Սաֆարովի գլխավորությամբ, որոնք մշակեցին եւ իրականացրին Արցախի եւ մերձակա շրջանների հայ բնակչության տեղահանության գործողություններ:

Ելնելով այս ամենից, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989թ. դեկտեմբերի 1-ին համատեղ նիստում որոշում ընդունեցին Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին, որին Ադրբեջանի ղեկավարությունը պատասխանեց սադրիչ գործողությունների մի նոր ալիքով: 1990 թ. հունվարին տեղի ունեցան գինված ջարդեր ք. Բաքվում, որոնց հետեւանքով հարյուրավոր հայեր զոհվեցին եւ հազարավորը փախստական դարձավ: Ընդ որում, որպես հիմնական պատճառ բերվում է այն հագամանքը, որ Հայաստանից փախստականները ապրելու տեղ չունեն, դրա համար էլ հայերը պետք է ազատեն բնակավայրերը ադրբեջանցիներին տեղավորելու համար[22]:

Դեպքերի նման ընթացքի պայմաններում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1990 թ. հունվարի 15-ին ընդունում է որոշում. «Արտակարգ դրություն հաստատել Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ու դա հարակից շրջանների, Հայկական ԽՍՀ-ի Գորիսի շրջանի տարածքում ...»[23]: Այդ որոշման համաձայն Լեռնային Ղարաբաղում հաստատվում է ռազմական դրություն, որտեղ մարզի բոլոր գործերի վարումը իր վրա էր վերցնում զինվորական պարետատունը: 1990թ. հունվարի 18-ին Արտակարգ շրջանի պարետ գեներալ մայոր Ա. Կասալապովը ընդունեց իր առաջին հրամանը, որով արգելվում են գործադուլները, հավաքները, միտինգները, ցույցերը, թատրոնային, սպորտային եւ այլ միջոցառումները: Հաստատվում է ՁԼՄ-ի գրաքննություն, ցրվում են հայկական արցախյան «Միացում» ժողովրդական շարժումը, ԼՂ Ազգային խորհուրդը եւ Արցախի հայ ուսանողության միությունը: Այսպիսով, Լեռնային

Ղարաբաղը դարձավ փորձադաշտ դեմոկրատական շարժումների ճնշման մեթոդների մշակման համար:

1990 թ. աշնանը դրությունը Լեռնային Ղարաբաղում էլ ավելի պլվեց, որը առաջին հերթին կապված է Անդրկովկասի քաղաքական իրավիճակով: Տեղի ունեցած երեք հանրապետությունների ընտրություններում կոմունիստական կուսակցությանը հաջողվեց պահպանել իր իշխանությունը միայն Ադրբեջանում: Նման պայմաններում Մոսկվայի վարչակազմը Կրեմլի համար ընդունում է հատուկ նշանակություն: Հայկական ինքնապաշտպանական ջոկատները հայտարարեցին տարածաշրջանի ապակայունացման հիմնական աղբյուր. մյուս կողմից բավականին մեծացվեց ադրբեջանական ՕՄՕՆ-ի քանակը: Ամենայն հավանականությամբ հենց այս շրջանում համաձայնեցվեց Մոսկվայի եւ Բաքվի միջեւ «հայկական հիմնախնդրի» վերջնական լուծման պլանը, որի առաջին էտապն էր Շահումյանի եւ մասամբ Խանլարի շրջանների հայերի բռնագաղթը ու ԼՂԻՄ-ը ադրբեջանցիներով մասսայական վերաբնակեցումը: Այս գործողությունների անմիջական ղեկավարումը ստանձնվեց դժնահիշատակ Վ. Պոլյանիչկոյին, որը աչքի էր ընկնում իր հայատյաց հայացքներով: Իր ելույթներից մեկում նա հայտարարել է «Ղարաբաղյան հողը մեր հողն է, եւ մենք պետք է այն զբաղեցնենք մեր երեխաների համար»:

Եվ այսպես 1991 թ. մայիսին ԽՍՀՄ ներքին զորքերը եւ ադրբեջանական ՕՄՕՆ-ը համատեղ իրականացրեցին «Օղակ» ծածկանուն ստացած գործողությունը: 1991թ. մայիս ամսից մինչեւ օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում, խորհրդային բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի լրիվ աջակցությամբ, անձնագրային ռեժիմի ստուգումների պատրվակով հայազգի բնակիչներ արտաքսվել են երկու տասնյակից ավելի հայկական գյուղերից Գետաշենից, Մարտունաշենից, Հադրութի շրջանի 17, Շուշիի շրջանի 4, Շահումյանի շրջանի 3 գյուղերից: «Օղակ» ռազմագործողությունը ազդարարեց դարաբաղյան հակամարտության ռազմական շրջանի սկիզբը. միաժամանակ այն անկասկած, դարձավ խորհրդային շրջանի առաջին եւ վերջին յուղաքացիական պատերազմը, որին մասնակցել են խորհրդային բանակի զորամասերը:

Իրավիճակը կտրուկ փոխվեց Մոսկվայում օգոստոսյան իշխանության ձախողումից հետո: Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը, որը պաշտոնապես հայտնել է իր աջակցությունը խունտարարներին, փոխեց իր դիրքորոշումը եւ հայտարարեց Ադրբեջանը դեպի անկախություն տանելու մտադրության մասին: Իսկ ԼՂ ղեկավար եւ

Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Պոլյանիչկոն, որը խոստացել էր խռովության հաջողությունից հետո Ղարաբաղում գործածած իր վայրագությունների փորձը տարածել ողջ ԽՍՀՄ տարածքով մեկ, անփառունակ մեկնեց Մոսկվա:

1991 թ. օգոստոսի 30-ին ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հռչակում է 1918-20 թթ. պետականության անկախության վերականգնումը սկիզբ դնելով ԽՍՀՄ-ից Ադրբեջանական ԽՍՀ-ի դուրս գալու գործընթացին: Այս առումով հարկ ենք համարում ընդգծել, որ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ադրբեջանի հավակնությունները, հատկապես անկախությունը վերականգնելուց հետո, ոչ մի հիմք չունեն, քանի որ ԼՂ-ը մուսավաթական Ադրբեջանի մաս չի կազմել եւ եղել է առանձին կազմավորում: Մյուս կողմից Ադրբեջանի անկախացումը ԼՂ-ին իրավական հիմք տվեց դուրս գալու նրա կազմից. «Մենք սպասում էինք դրան եւ պատասխանեցինք Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումով: Խորհրդային Սահմանադրության մեջ կար մի հոդված, որտեղ ասվում էր, որ եթե մի հանրապետություն դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից, ապա նրա մեջ գտնվող Ինքնավար հանրապետությունը իրավունք ունի որոշելու մնալ այդ հանրապետության կազմում, թե ոչ»:

Ադրբեջանը ցնցումով ընդունեց 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում գումարված լեռնային Ղարաբաղի Մարզխորհրդի եւ Շահումյանի Շրջխորհրդի միացյալ նիստում ընդունված հանրահայտ պատմական որոշման լուրը, ըստ որի Մարզը եւ Շահումյանի շրջանը ընդգրկող տարածքը հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ԽՍՀՄ կազմալուծման ընթացքում կայացել է լեգիտիմ ձեւով: Նրա կայացման օրինականության հիմքում ընկած են թե ԽՍՀՄ 1991 թ. «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» Օրենքը, թե ազգերի ինքնորոշման միջազգային իրավական նորմը:

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ